Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

Մկրտիչ Արմեն

Գոբա

Կանգնել էր Գոբան տիեզերքի անհունության մեջ՝ երիտասարդ, բայց մռայլատես: Նրա չորս կողմում, գլխավերևը, ոտքերի տակ, դատարկությունն էր՝ անթափանց մթությամբ սևացած: Միայն հեռու և մոտիկ աստղերի և մոլորակների թույլ լույսն էր ընկել նրա վրա այս ու այն կողմից, և նա լուսավորվել էր աղոտ ու անհավասար:

Մերթ-մերթ, կարծես անցնող աննկատելի քամուց, վեր ու վար էր ճոճվում նրա կերպարանքն անմարմին պատկերի թեթևությամբ, որից և զգացվում էր, որ նա կանգնած էր անպատվանդան, դատարկության մեջ:

Գոբան գլխին ուներ լայնեզր թաղիքե գլխարկ, ուսերին գցել էր սև թիկնոց, որը մի տեղով կոճկված էր կրծքի վրա և բաց էր այդտեղից մինչև ներքև: Ոտքերին ուներ մինչև ծնկները հասնող գուլպաներ՝ հնաձև տուֆլիների մեջ: Նրա դեմքը գունատ էր ու տանջված: Նա նայում էր հեռուն՝ երևի համաստեղություններից մեկին:

Գոբան մրսում էր: Տիեզերական ցուրտը կաշկանդել էր նրան: Նա վեր էր բարձրացրել ուսերը և կծկվել էր: Թիկնոցի տակ նա ձեռքերը սեղմել էր իրար՝ երևի շփելու նպատակով, բայց մտազբաղ ու մտացրիվ, նա մոռացել էր անել այդ:

Գոբայի ոտքերի առջև, անհավասար լուսավորված կաթնագույնով, գտնվում էր երկրագունդը՝ մի մեծ գլոբուսի չափով: Այն ևս մերթ-մերթ ճոճվում էր՝ զգացնել տալով իր շրջապատի մթության դատարկությունը:

Ռակետի նման սրընթաց անցավ մի գիսաստղ Գոբայի գլխարկի մոտով՝ լուսավորելով դրա լայն եզրի մի մասը: Գոբան սթափվեց, նայեց շուրջը՝ նման մի մարդու, որ կանգնել էր խավարի բարձունքի վրա և նայում էր տարածված քաղաքի անհամար կրակներին:

Ավելի սուր զգալով ցուրտը, նա կռացավ, ապա պպզեց և չռված մատներով ձեռքերը պարզեց երկրագնդի վրա:

Այնտեղից ջերմություն էր գալիս: Այդ ջերմությունը կարծես ավելի զգացնել տվեց շրջապատի ցուրտը, և Գոբան սրսփաց: Նա ատամները խփեց իրար, նրա մեջքը պաղեց: Երկրագնդի այն մասը, որի վրա նա պարզել էր իր ձեռքերը, լավ չէր տաքացնում: Գոբան ցուցամատով խփեց մի մեծ սարի գագաթին: Ինչպես ջրի վրա լողացող ռետինե սնամեջ գնդակ, երկրագունդը լողաց իր առանցքի շուրջը և Գոբային դեմ տվեց իր մի այլ երեսը:

Աֆրիկան էր և Ատլանտյան օվկիանոսը: Գոբայի երեսին խփվեց տաք օդը, նա սկսեց ձեռքերն իրար շփել և բացուխուփ անել: Մատների ստվերները, որ ընկել էին երկրագնդի լուսավոր մակերեսի վրա, արագ և անհանգիստ թրթռում էին:

Ջերմությունը, մտնելով նրա արյան մեջ, ձեռքերից անցավ դեպի Գոբայի դժբախտ մարմնի բոլոր մասերը: Գոբան տաքացավ և նույնիսկ ժպտաց: Նոր միայն, նորից ընդունակ դառնալով տեսնելու և դատելու, նա երկրագնդի վրա նկատեց քաղաքներ, ծովերով լողացող շոգենավեր և սկսեց մեծ հետաքրքրությամբ դիտել:

Սրելով լսողությունը, նա լսեց նաև այնտեղից եկող հնչյունները՝ մարդկության ձայները:

Եգիպտոսից մինչև Իսպանիա ամպային մի անթափանց ծուխ կեղտոտ բամբակի նման ծածկել էր երկրագնդի մակերեսը, խանգարում էր նայել: Գոբան ձեռքը մոտեցրեց, տարուբերելով հովհարեց, և ամպը մանր կտորների վերածվելով, ցրիվ եկավ ու անհետացավ: Նա թիկնոցի փեշով սրբեց-չորացրեց ձեռքի կողը, որ թրջվել էր, ինչպես եռացող կաթսայի գոլորշու վրա բռնելուց հետո:

Ցերեկ էր: Սուեզի ջրանցքով, իրար ետևից շարան կազմած, անցնում էին շոգենավերը: Գոբան ականջ դրեց: Նրանցից մեկից գալիս էր նվագածության ձայն՝ երևի ռադիոյով ուրիշ տեղից ստացված: Լսողությանը հասան նույնիսկ բառեր. «Ալյա, Ալյա, Ալյա»... Եթովպիայում, արևով սպիտակած գետնի վրա, մրջյունների պես ժրաջան՝ վխտում էին բազմաթիվ սև կերպարանքներ՝ եթովպացիները:

Գոբան զգուշությամբ մատը մոտեցնելով օվկիանոսի ափին, երկրագունդը հրեց: Այն լողաց մի պահ՝ նորից շուռ տալով երեսը: Օվկիանոսն այժմ մնաց մի կողմում, իսկ դիմացը Հնդկաստանն էր և Չինաստանի մի մասը: Ինչ-որ մեծ քաղաք զրնգում էր բազմատեսակ հնչյունների անթիվ և անվերջ խառնումներից: Այդ ընդհանուր զրնգոցի միջից երբեմն լսվում էր գործարանային շչակի ձայն, շոգեմեքենաների անիվների շտապ կտկտոց ռելսերի վրա, որ կարծես քամուց հանկարծակիորեն բերված, անհետանում էր իսկույն: Լսվում էին անասունների բառաչ ու մայոց, անբացատրելի հստակությամբ երբեմն որոշակվում էր հնդկերեն մի խոսակցություն՝ տղամարդու և կնոջ միջև: Իսկ երբեմն, ակնբախորեն ռադիոբարձրախոսով ուժգնացած, լսվում էր մի երգի մի կտոր.— «Գուցե Ալյա՞, գուցե Ալյա՞, գուցե, գուցե, գուցե Ալյա՞...»:

Գոբան նորից պտտեցրեց երկրագունդը: Նրա աչքի առաջ այժմ Եվրոպան էր: Գետինը չէր երևում խիտ փռված քաղաքների, երկաթուղիների, գործարանների, օդանավակայանների, ջրանցքների և այլ կառուցումների տակ: Ամպ բոլորովին չկար, իսկ անթիվ ծխնելույզներից ելնող ծուխը հալչում էր տեղն ու տեղը և չէր խանգարում նայելուն: Յուրաքանչյուր քաղաք զրնգում էր առանձին, բայց հար և նման մյուս բոլորին, որովհետև յուրահատուկ կամ տարբեր ձայներն ու հնչյունները լուծվում, միաձուլվում էին ընդհանուր զրնգոցների մեջ: Իսկ ռադիոն իր եթերային ալիքներով միաժամանակ հասնում էր ամեն տեղ, ամեն տեղ ասում էր նույնը, և Եվրոպայի վրա, բարձր ու որոշակի, կանգնած էր՝ «Ալյա. . . Չքնաղ Ալյա, դու իմ Ալյա, ընդմիշտ Ալյա…»:

Գոբան ծայր աստիճան զարմացավ: Այդ ի՞նչ Ալյա էր, որով հիացել էր ողջ երկրագունդը. . . Նա ուզեց նայել ողջ երկրագնդին միանգամից: Հեռացնելով գլուխը, նա նայեց ընդհանուր հայացքով: Շրջապատի տիեզերական անթափանց մթության մեջ նա տեսավ երկրագունդն ամբողջովին: Եվ չքացավ նրա պատրանքը՝ իբրև թե ինքն էլ էր այնտեղ՝ երկրի վրա: Նա նորից զգաց դատարկ տիեզերքն իր շուրջը և տագնապահար շտապեց դեմքը մոտեցնել լուսավոր գնդին: Ցուցամատով ու բթամատով զգուշությամբ բռնելով Մոնբլանի գագաթից, նա հրեց այն մի կողմ և ձեռքը ետ քաշեց: Երկրագնդի պտույտի ընթացքում Գոբայի ականջին նորից հասավ՝ «Ալյա», նա արագ մոտեցրեց ձեռքը՝ կասեցնելու համար երկրագնդի պտույտը, բայց չկարողացավ որոշել, թե ո՞ր քաղաքից կամ գնացքից, շոգենավից, կամ այլ տեղից եկավ ձայնը:

Գոբան ավելի ուշադիր սևեռեց աչքերը, սկսեց զննել երկրագնդի մասերն առանձին-առանձին: Նա փնտրում էր Ալյային. . .

Օվկիանոսի վրա գիշեր էր: Մութ ջրերի վրայով, որոնց ալիքների գագաթները մեկ-մեկ փայլատակում էին՝ անդրադարձնելով ինչ-որ հեռու լույս, անցնում էր հազարավոր կրակների մեջ շողշողացող շոգենավը: Նրա տախտակամածն ու ընդարձակ դահլիճը համատարած լուսավորված էին ցերեկվա պես: Տակառների ու մեծ թաղարների մեջ փարթամ աճում էին բույսեր: Փայլատակում էին բացուխփվող դռների ապակիները: Նվագում էր օրկեստրը: Գալիս էր տապակվող մսի հոտը:

Դահլիճում պարում էին: Ավելի ճիշտ՝ պարում էր մեկը, իսկ մյուս բոլորը նայում էին նրան: Պարում էր մի աղջիկ՝ բարձրահասակ, նրբակազմ, խարտյաշ մազերով: Նրա կիսակոշիկների բարձր կրունկները տակտով տկտկում էին հատակի վրա, թվում էր, թե օրկեստրը դրանցից էր չափ առնում, դրանց էր ենթարկվում. . .

Նա չէ՞ր արդյոք Ալյան. . . Թե՞ նա մի ուրիշն էր, որը պարում էր ամենատարած Ալյայի պարը: Լուռ ու հիացմունքով նրան նայող մարդիկ, նվագի համապատասխան տեղում, հանկարծ բացականչում էին «Ալյա»՝ բառը հյուսելով նվագին:

Իսկ շեփորները, ծնծղաները, թմբուկը, զանգակները, շտապ, տեմպերամենտով, խելակորույս, հարցնում էին շարունակ՝ «գուցե Ալյա՞, գուցե, գուցե, գուցե Ալյա՞...»:

Էլեկտրականության տակ փայլփլում էին գուլպաները պարող Ալյայի ոտքերի վրա՝ երկայնակի ձգվող գծերի ընդհանուր փայլով: Տկտկում էին բարձր կրունկները պարկետի վրա: Դահլիճի ոսկեղեն կենտրոնի պես շողում էր նրա գլուխը ոսկեգույն հարթ մազերով՝ ռուսավարի սանրված և ռուսավարի հյուսված:

Ա՛խ, որքա՜ն կուզենար Գոբան լինել այդ շոգենավի վրա, մտնել այդ դահլիճը, նստել աթոռի վրա, նայել Ալյային և նույնպես բացականչել՝ «Ալյա՛, Ալյա՛...»:

Գոբան անձկությամբ նայեց դահլիճի դռանը: Ո՛չ, իր ճկույթն անգամ չէր մտնի այնտեղով: Իսկ ներսում Ալյան էր, չքնաղ Ալյան, գուցե Ալյան. . . Տանջվող երիտասարդի ինչպիսի՜ սիրով կսիրեր Գոբան նրան, կսեղմեր իր կրծքին, կասեր նրան խոսքեր, որ երբեք չեն արտասանվել տիեզերքի մթության ու դատարկության մեջ և որոնք հատուկ են միայն մարդկությանը. . .

Գոբան ջղաձգորեն առաջ մեկնեց ձեռքը և թափով շուռ տվեց երկրագունդը: Նրան անտանելի էր՝ տեսնել մարդկային երջանկությունը և հաղորդակից չլինել դրան: Շուռ տվեց, և հանկարծ, ադամանդների հազարափայլ շողերով նրա աչքերի առաջ փռվեց անծայր Մոսկվան, որ կարծես մրցության էր ելել տիեզերքի սարսափելի մթի ու ցրտի, դատարկության ու տխրության դեմ: Գոբան հիացմունքից աղաղակեց և սթափվեց…

Սեղանի վրա կանգնած էր գլոբուսը: Նրա վրա իր գլուխը խոնարհած, դեռ նայում էր ուսանող Արևշատը: Նա դեռ չէր հավատում իր երջանկությանը: Համոզվելու համար, նա մի քանի անգամ նայեց շուրջը՝ սենյակին, ապա մոտենալով բաց պատուհանին, նայեց դուրս: Այնտեղ փռված էր լուսազարդ Երևանը: Վերջապես հաշտվելով իր մեծ երջանկության մեծ հաճույքի հետ, նա շշնջաց.

— Ի՜նչ լավ է լինել մարդ՝ երկրի վրա. . .